ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՂԹՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված հայտերին համաձայնություն ստանալուց հետո 1.<<Աղնջաձոր բնակավայրում երիտասարդական կենտրոնի ստեղծում, Թառաթումբ բնակավայրում մշակույթի տան վերանորոգում>>, <<Արտաբույնք բնակավայրում մանկական խաղահրապարակի զինում և փոքրիկ զբոսայգու ստեղծում>>, <<Շատին և Քարագլուխ բնակավայրերի հենապատերի կառուցում>> ծրագրերի համար հայտարարվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման մրցույթ, որի արդյունքում ձեռք են բերվել նախագծանախահաշվային բոլոր փաստաթղթերը և այդ փաստաթղթերի փորձաքննության եզրակացությունները:

Բոլոր փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետներում ուղարկվել են լիազոր մարմին:

Շուտով կհայտարարվի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթ:

25 հունիսի 2026 թ.